Ուղեցույց

- Ձեզ տրվում է B նշումով ծրար: Համոզվեք, որ դրա վրայի մասնակցի կոդը ճիշտ է: Ծրարի մեջ կգտնեք.

  1. այս ուղեցույցի անգլերեն տարբերակը և/կամ այս ուղեցույցը.
  2. հաստատունների աղյուսակ
     հաստատունների աղյուսակի թարգմանված տարբերակը (առկայության դեպքում)
  3. միլիմետրական թղթեր.
  4. աշխատանքային թերթեր.
  5. S նշումեվ ծրար (համոզվեք, որ դրա վրայի մասնակցի կոդը ճիշտ է):

- **S ծրարը թույլատրվում է բացել միայն փուլի սկզբը ազդարարող սուլիչի հնչելուց հետո:**
- S ծրարի մեջ կգտնեք հետևյալը.

  1. հարցաշարը և/կամ հարցաշարի թարգմանված տարբերակը.
  2. answersheet-երը:

- Փուլի տևողությունը 4 ժամ է:
- Փուլը կազմված է հետևյալ խնդիրներից.

D01	= 90 միավոր
D02	= 60 միավոր
Ընդհանուր.	150 միավոր

- **Պատասխանների գրանցումը.**

  1. <u>answersheet-եր.</u>
     - յուրաքանչյուր խնդրի համար տրված է առանձին answersheet: Յուրաքանչյուր answersheet-ի վրա գրեք Ձեր մասնակցի կոդը.
     - յուրաքանչյուր խնդրի/ենթահարցի վերջնական պատասխանը անհրաժեշտ է գրել answersheet-ի համապատասխան վանդակում.
  2. <u>միլիմետրական թղթեր.</u>
     - յուրաքանչյուր միլիմետրական թղթի վրա գրեք Ձեր մասնակցի կոդը.
     - յուրաքանչյուր միլիմետրական թղթի վրա հատկացված տեղում գրեք գրաֆիկի համապատասխան համարը, որը տրված է խնդրում: Հակառակ դեպքում գրաֆիկը կարող է չգնահատվել.
     - անհրաժեշտության դեպքում կարող եք խնդրել լրացուցիչ միլիմետրական թղթեր.
  3. <u>աշխատանքային թերթեր.</u>
     - մանրամասն աշխատանքը պետք է երևա աշխատանքային թերթ(եր)ում.
     - յուրաքանչյուր աշխատանքային թերթին գրեք Ձեր մասնակցի կոդը.
     - նոր խնդիրը սկսեք նոր աշխատանքային թերթից: Գրեք խնդրի համարը վերևի համապատասխան վանդակում.

- օգտագործեք աշխատանքային թերթի երկու կողմն էլ: Գրեք միայն շրջագծված տիրույթում.
- հստակ ջնջեք աշխատանքի այն մասը, որը չեք ուզում գնահատվի.
- յուրաքանչյուր հարցի համար համարակալեք աշխատանքային թերթի էջերը վերևում եղած վանդակում՝ սկսելով 1-ից (ամեն թերթը 2 էջ է): Օրինակ՝ D01-ի համար միայն 1 աշխատանքային թերթ օգտագործելու դեպքում էջերը պետք է համարակալված լինեն «D01, 1» և «D01, 2»՝ համապատասխանաբար FRONT և BACK կողմերին: Այնուհետև, D02-ի համար 2 աշխատանքային թերթ օգտագործելու դեպքում համարակալումը պետք է լինի «D02, 1» և «D02, 2» առաջին թերթի, և «D02, 3» և «D02, 4»՝ երկրորդ թերթի համար.
- անհրաժեշտության դեպքում կարող եք խնդրել լրացուցիչ միլիմետրական թղթեր.
- **աշխատանքային թերթերը նշված կերպով չհամարակալելու դեպքում դրանք կարող են չգնահատվել:**

- **Փուլի վերջում.**
  - համոզվեք, որ գրել եք Ձեր մասնակցի կոդը բոլոր օգտագործված թերթերի և միլիմետրական թղթերի վրա.
  - դասավորեք թղթերը հետևյալ կերպ.
    D01-ի answersheet-երը, D01-ի միլիմետրական թղթերը, D01-ի աշխատանքային թերթերը, D02-ի answersheet-երը, D02-ի միլիմետրական թղթերը, D02-ի աշխատանքային թերթերը.
  - վերը նշված ձևով դասավորված թղթերը դրեք **S** ծրարի մեջ: բոլոր answersheet-երը անհրաժեշտ է դնել **S** ծրարի մեջ՝ անկախ նրանից՝ օգտագործել եք դրանք, թե ոչ.
  - **գնահատվելու է միայն S ծրարի պարունակությունը: Այս ծրարից դուրս ոչ մի թուղթ չի գնահատվելու.**
  - դրեք փոքր **S** ծրարը մեծ **B** ծրարի մեջ.
  - մյուս բոլոր թերթերը՝ ուղեցույց(եր)ը, հարցաշար(ներ)ը, հաստատունների աղյուսակ(ներ)ը և չօգտագործված միլիմետրական թղթերն ու աշխատանքային թերթերը դրեք **B** ծրարի մեջ:
  - կապեք **B** ծրարի թել-կնիքը.
  - հանձնեք **B** ծրարը հսկիչին: Համոզվեք, որ սեղանին ոչ մի թուղթ չեք թողել՝ բացի կանաչ և կարմիր քարտերից:

- **Ընդհանուր ուղեցույց.**
  - փուլի ընթացքում զուգարան գնալու անհրաժեշտության դեպքում բարձրացրեք սեղանին եղած կանաչ քարտը: Ձեզ կուղեկցեն.
  - փուլի ընթացքում օգնության անհրաժեշտության դեպքում բարձրացրեք սեղանին եղած կարմիր քարտը.
  - գրելու համար օգտագործեք միայն կապույտ կամ սև գրիչ: Նկարները գծեք մատիտով.
  - գրաֆիկների համար անհրաժեշտ է օգտագործել մուգ մատիտ.
  - առանց մանրամասն լուծման գրված վերջնական պատասխանը կարող է ստանալ ոչ լրիվ միավոր.
  - պատասխանի՝ սխալ ճշտությամբ, սխալ չափողականությամբ կամ առանց չափողականության գրված լինելու դեպքում կարող է ստանալ ոչ լրիվ միավոր.
  - ֆիզիկական և աստղագիտական հաստատունների անհրաժեշտ արժեքները պետք է վերցնել տրված հաստատունների աղյուսակից: